

*Այս դասի (դասի տեքստ + մտախփացնող
ներածական տեսանյութ + տեսանյութ
օրինակ + բառարան +
ինքնաստուգիչ
հարցեր + առաջադրանք)
յուրացման համար հարկավոր է մինչև
360 րոպե/6 ժամ:*

ԴԱՍ 3

ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱՏԵՔՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՍՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(կարող եք գտնել հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Այս դասի ընթացքում Դուք կձանոթանաք՝

- **սահմանման** էությանը,
- դրա կանոնավորությունն ապահովող նորմերին,

հնարավորություն կունենաք դիտարկելու՝

- համատեքստի և ենթատեքստի գործառնական նշանակությունը մտքի (ելույթի) մատուցման և մեկնաբանման գործընթացներում:

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 120 րոպե

3.1. ՄԱՀՄԱՆՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



Առանց գործածվող հասկացությունների ու արտահայտությունների հստակ սահմանման, դրանց իմաստի հստակեցման՝ անհնար է պատկերացնել արդյունավետ հաղորդակցում: Երբեմն էլ ապացուցման հիմքերի դերում հանդես են գալիս հենց սահմանումները: Ուստի, դրանց կանոնավորությունը ևս կարևոր գործոն է փաստարկման լիարժեքությունն ու արդյունավետությունն ապահովելու առումով:

Սահմանումը տրամաբանական գործողություն է, որի քննաքննում.

ա) բացահայտվում է հասկացության բովանդակությունը,

բ) մեկնաբանվում է բառի կամ արտահայտության նշանակությունը,

գ) մատնացույց է արվում սահմանվող հասկացությանը արտացոլված առարկան:

Առաջին դեպքում սահմանումը կոչվում է *հասկացությանին (ռեալ)*, երկրորդ դեպքում՝ *բառային (նոմինալ)*, իսկ երրորդ պարագայում՝ *առարկայական (օստենսիվ)*: Գոյություն ունեն սահմանման ձևերի դասակարգման այլ եղանակներ ևս:

Տվյալ դասընթացի շրջանակներում, սակայն, առավել կարևոր է ուսումնասիրել և իմանալ այն կանոնները, որոնք տարածվում են սահմանման բոլոր տեսակների վրա և ապահովում են դրանց տրամաբանական ու կիրառական արժեքավորությունը: Այդ կանոնները հինգն են.

1) **Սահմանումը պետք է լինի համաչափ:** Այսինքն՝ սահմանվող և սահմանող **հասկացությունների ծավալները պետք է համընկնեն:** Հակառակ դեպքում սահմանումը լինում է **լայն** կամ **նեղ:** **Սահմանումը**

Սահմանեք «օրենք» հասկացությունը և Ձեր սահմանումը ստուգեք սահմանման կանոններին համապատասխանելու տեսանկյունից:



կոչվում է լայն, երբ *սահմանող հասկացությունը* ծավալով ավելի մեծ է, քան սահմանվողը (Ս-ող > Ս-վող): **Սահմանումը** նեղ է լինում, երբ սահմանող հասկացությունը ծավալով ավելի նեղ է, քան սահմանվողը (Ս-ող < Ս-վող):

Օրինակ՝ «կողոպուտը ուրիշի սեփականության դեմ ուղղված հանցագործությունն է», «բանդան հանցավոր խումբ է» տարբերակներում սահմանումը լայն է, քանի որ կողոպուտից բացի ուրիշի սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ ևս գոյություն ունեն (գողությունը, ավազակությունը և այլն): Երկրորդ օրինակում էլ «բանդա» հասկացությունը չի սպառում հանցավոր խումբ հասկացության ծավալը:

Իսկ ահա «պատիժը պետական հարկադրանքի ձև է, որը սահմանվում է դատարանի դատավճռով այն անձի նկատմամբ, որը մեղավոր է ճանաչվել տնտեսական ոլորտում կատարած հանցագործության համար» տարբերակում սահմանումը նեղ է, քանի որ պատիժներ սահմանվում են ոչ միայն տնտեսական ոլորտում կատարված հանցագործությունների համար:

II) *Սահմանման ընթացքում պետք է բացառել նույնաբանությունը:* Այս կանոնին Դուք արդեն ծանոթ եք ապացուցման կանոններին նվիրված դասից: Էությունը նույնն է. սահմանվող հասկացության բովանդակությունը բացահայտելու նպատակով կիրառվում է այդ նույն հասկացությունը:

Օրինակ՝ «խարդախը նա է, ով խարդախություն է անում» կամ «վիրավորանքը մարդու արժանապատվությունը, ինքնասիրությունը վիրավորող արտահայտություններն ու հայտարարություններն են»:

III) *Սահմանելիս չպետք է թույլ տալ շրջապտույտ:* Այսինքն՝ երբ Ա հասկացությունը սահմանում ենք Բ-ի օգնությամբ, ապա Բ-ն սահմանելիս չի կարելի վերադառնալ սկզբնական Ա հասկացությանը: Օրինակ՝



2.2 գլխից վերհիշեք ապացուցման կանոնները:



«տրամաբանությունը գիտություն է կանոնավոր մտածողության մասին, իսկ կանոնավոր է այն մտածողությունը, որն ընթանում է տրամաբանության օրենքներին համապատասխան»:

IV) Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ժխտական ձևակերպումներից:

Իհարկե, կան դեպքեր, երբ երևույթի էությունն ի ցույց է դրվում ու սահմանվում հենց ժխտական դատողությունների ու ձևակերպումների օգնությամբ, ինչպես օրինակ՝ *անմեղսունակ* - իր վարքն ու գործողությունները կառավարելու անընդունակ, դրանց էությունը և հետևանքները չգիտակցող, *անաշխատունակ* - աշխատանք կատարելու անընդունակ, անկարող:

Սակայն այն դեպքերում, երբ հնարավոր է սահմանումը ձևակերպել հաստատական դատողությունների միջոցով, պետք է խուսափել ժխտական ձևակերպումներից ու դատողություններից: Օրինակ՝ ընդունելի չեն այսպիսի սահմանումները. «Էմպատիան ո՛չ սիմպատիա է, ո՛չ էլ անտիպատիա», «դատարանը ոչ կառավարական կազմակերպություն չէ»: Նման սահմանումներից պարզ չէ, թե ըստ էության ինչ է իրենից ներկայացնում սահմանվող հասկացությունը կամ երևույթը, տվյալ դեպքում՝ Էմպատիան և դատարանը:

V) Սահմանման ընթացքում պետք է բացառել այլաբանությունները, գեղարվեստական համեմատությունները, փոխաբերությունները:

Այլաբանությունները, գեղարվեստական համեմատություններն ու փոխաբերություններն, անշուշտ, որպես պերճախոսական հնարներ բավական ազդեցիկ են և կիրառելի են ինչպես գեղարվեստական խոսքի, այնպես էլ դատական ճառի շրջանակներում: Սակայն դրանք որպես հասկացությունների սահմանումներ



առաջարկելն էսպես խճճում է ասելիքը՝ կասկածի տակ դնելով խոսողի մասնագիտական գիտելիքներն ու իրավիճակի ադեկվատ ընկալման հանգամանքը:

Օրինակ՝ չի կարելի որպես հասկացության սահմանում ներկայացնել հետևյալ դատողությունները. «ծերունիները կյանքի խիղճն են և իմաստությունը», «ճշմարտությունը բանականության դուստրն է և իմաստության մայրը»: Թեև այսպիսի այլաբանություններն ու փոխաբերությունները խոսքը դարձնում են գունեղ, պատկերավոր ու հուզական, այնուհանդերձ դրանք իբրև սահմանումներ գործածելն անընդունելի է: Ինչպես որ չի կարելի սահմանադրությունը սահմանել որպես պետականության շենքի հզոր հիմնասյուն, օրենքի տեքստում երկրի նախագահին ներկայացնել որպես հոգատար հայր, երիտասարդությունը՝ կյանքի գարուն և այլն:

3.2. ՄՏՔԻ ՈՉ ԲԱՑԱՀԱՅՑ ՁԵՎԵՐԸ: ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՈՒ ԵՆԹԱՏԵՔՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Փաստարկման, դատական ճառի արդյունավետ կառուցման համար կարևոր է գործածվող դրույթներն ու արտահայտությունները դիտարկել ու վերլուծել ոչ միայն ավանդական-ձևական տրամաբանության, այլև բովանդակային, ձևայնացված, ոչ դասական տրամաբանական համակարգերի տեսանկյուններից: Արժեքավոր է, մասնավորապես, իրավաբանի խոսքն ու դատողությունները *փոխակերպական տրամաբանության* տեսանկյունից դիտարկելը: Տրամաբանական այդ համակարգն ուսումնասիրում է մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերը, մտքի բացահայտ ձևերի ճշգրտման, դրանցից ոչ բացահայտ ձևերի բխեցման կանոնները [տե՛ս Брутян Г.А., Трансформационная логика. Ер., 1983]:

Մտքի բացահայտ ձևը [կշռադատությունների](#) այն [1-ին դասից](#) վերհիշեք, թե

համակարգն է, որն ակնհայտորեն ամրագրված է ներկայացվող տեքստի միջոցով՝ գրավոր կամ բանավոր խոսքի միավորներով:

Ոչ բացահայտ մտքի ձևեր կշռադատությունների այն համակարգն է, որն ակնհայտորեն ամրագրված չէ տեքստի գրավոր կամ բանավոր արտահայտման միջոցներով, սակայն այն կարելի է բխեցնել, դրա մասին կարելի է կռահել առաջադրված տեքստի համատեքստն ու ենթատեքստը վերլուծելու արդյունքում: Ըստ այդմ՝ մտքի ոչ բացահայտ ձևերը լինում են *համատեքստային* և *ենթատեքստային*:

Համատեքստը կշռադատությունների այն համակարգն է, որի շրջանակներում գործածվում է տվյալ դրույթը (միտքը կամ արտահայտությունը), և որի վերլուծությունը թույլ է տալիս հստակեցնել ու ճշգրտել դրույթի իմաստն ու նշանակությունը: Երբեմն էլ տրամաբանական համատեքստին փոխարինելու է գալիս *Ֆիզիկական համատեքստը*՝ այն պայմաններն ու հանգամանքները (լսարանի կրթամակարդակը, ժողովրդագրական կազմը, գործի հանգամանքները, քաղաքական իրավիճակը և այլն), որոնց պարագայում տեղի է ունենում ելույթը, շրջանառվում է դրույթը, միտքը:

Ենթատեքստը այն դատողությունների համակարգն է, որոնք թեև ակնհայտ կերպով ամրագրված չեն տեքստի լեզվական միավորների օգնությամբ, սակայն դրանք կարելի է բխեցնել, դրանց մասին կռահել տեքստի դատողությունների լրացուցիչ վերլուծության արդյունքում:

Առանց տրամաբանական կամ ֆիզիկական համատեքստը հաշվի առնելու հնարավոր չէ միանշանակ մեկնաբանել հետևյալ դատողությունների իմաստը. «Պողոսը Պետրոսին ասաց. «Համա՛ թե ավագակն ես

ինչ է կշռադատությունը:

Էջ: | 59





դու»», «Գևորգյանը մշտապես հպարտանում էր այդ օպերացիայով», «Դասախոսը գոհ մնաց լսարանից», «Նա սիրում էր նկարել մարտի տեսարաններ»: Եթե Պողոսի՝ Պետրոսին ուղղված հայտարարությունը հնչել է դատական բանավեճի ընթացքում, ապա այն կմեկնաբանվի որպես վիրավորանք ու կշտամբանք, իսկ եթե այդ հայտարարությունը հնչել էր, երբ Պետրոսը Պողոսի համար հաճելի անձնավորության հետ անակնկալ հանդիպում էր կազմակերպել, ապա նշված խոսքերը պետք է ընկալել որպես հաճոյախոսություն: Երկրորդ օրինակում, կախված իրավիճակից, «օպերացիա» արտահայտությունը կարող է ունենալ վիրահատական միջամտության, ռազմական, ֆինանսական, հետախուզական կամ էլ հակահարկաչական գործողության իմաստ: Երրորդ և չորրորդ դատողությունների իրական իմաստը ևս կարելի է ճշգրտել միայն տրամաբանական կամ ֆիզիկական համատեքստի հստակեցմամբ:

Ելույթը պատրաստելիս շատ կարևոր է հաշվի առնել տրամաբանական և ֆիզիկական համատեքստը, որի խորապատկերում այն հնչելու է: Ինչպես որ անհարմար է Եղեռնի գոհերի հուշարձանի ֆոնին զվարճադեմ «selfie» անել ու լուսանկարվել, առավել ևս, երբ այցելության նպատակը գոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելն է, այդպես էլ լսարանում անկումային տրամադրության պարագայում տեղին չեն ավելորդ զվարճախոսությունները, և՛ հակառակը:

Անեկդոտը, որը կարելի պատմել տղամարդկանց շրջապատում, կարող է որպես ոչ հարգալից ժեստ դիտարկվել կանանց միջավայրում: Նման իրավիճակում հայտնվեց Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինը՝ Գերմանիայի Դաշնության կանցլեր Ա.Մերկելի հետ համատեղ ասուլիսի (հունիս, 2013թ.) ընթացքում առաջին ամուսնական գիշերվա մասին անեկդոտ պատմելով (<https://www.youtube.com/watch?v=1hHICrGqV-Y>):



(1 րոպե)



Մեր ժամանակներում հաճախակի են այսպես կոչված «թաքնված»՝ համատեքստային ու ենթատեքստային գովազդի օրինակները, երբ տեղեկատվությունը, որը գովազդատուն ցանկանում է հասցնել սպառողին, շրջանցելով գիտակցական-տրամաբանական արգելքները՝ մատուցվում է նրա ենթագիտակցությանը՝ ստեղծելով դրական (կամ բացասական) տրամադրվածություն գովազդվող առարկայի, երևույթի նկատմամբ [տե՛ս Հովհաննիսյան 2008. 619-626]:

Երբեմն էլ համատեքստը ոչ ճիշտ հաշվի առնելը կամ անտեսելը կարող է թուլացնել ասելիքը, անգամ՝ հանգեցնել հակառակ արդյունքի:

Հայաստանի կապի բնագավառում հայտնի «ԱրմենՏել» ընկերությունը 2007թ. ամռանը բաժանորդներին գրավելու նպատակով առաջարկում էր մի ծառայություն, որից օգտվելու դեպքում գիշերվա ժամերին բջջային զանգի սակագինը անհամեմատ էժան կարող էր լինել: Գովազդի ոճն ու բովանդակությունը հուշում էին, որ այդ ծառայությունը հասցեագրված էր հիմնականում երիտասարդ, սիրահարված ու ռոմանտիկ բաժանորդներին: Գովազդը հայտարարում էր. «Գիշեր է գալու՝ թե՛ էլ լինելու»: Վերոհիշյալ թիրախային խմբի համար, իրոք որ, գրավիչ կարգախոս է ... եթե հաշվի չառնենք ֆիզիկական համատեքստը: Բանն այն է, որ 2007-ի ամռանը Հայաստանում առկա էր բավականին բարձր ջերմաստիճանային ռեժիմ, առանձին օրերին օդի ջերմաստիճանը ստվերում հասնում էր մինչև 39⁰C-ի: Ամառային տապի պայմաններում թե՛ գիշերվա մասին խոսելը, թեկուզև փոխաբերական իմաստով, հազիվ թե առանձնապես ոգևորիչ ու գրավիչ լինի: Գովազդն ավելի գրավիչ կարող էր լինել, եթե ակնարկվեր. «Գիշեր է գալու՝ գով է լինելու»: Ամռան տապի պայմաններում գով գիշերվա գաղափարը ակտիվանալու, սիրելի մարդու հետ ինքնամոռաց ու ռո-



մանտիկ գրույցի բռնվելու ավելի գրավիչ ու նպաստավոր համատեքստ կարող է լինել, քան գրույցի թեժության մասին ակնարկը:

«Գիշեր է գալու՝ թեժ է լինելու» տարբերակով գովազդը ավելի տեղին կլիներ, թերևս, ձմռան ամիսներին, երբ թեժության (ջերմության) մասին հիշատակումն ինքնին հաճելի տրամադրություն կստեղծի:

Մեկ այլ օրինակ, այս անգամ՝ *ենթատեքստի* ոչ ճիշտ հաշվարկման մասին: ՀՀ-ում ավտոմեքենաների վաճառքով զբաղվող Megna և Muran ընկերություններն Էլեկտրոնային ՉԼՍ-ներով տարածվող իրենց գովազդում հորդորում էին. «Եվս մեկ ավտովթար: Պահպանե՛ք թույլատրելի արագությունը հատկապես մայրուղիներում: Մտածե՛ք մինչև մեքենայի դեկին նստելը»: Մինչդեռ ավելի ճիշտ կլիներ հորդորել ու պահանջել. «Մի՛ գերազանցեք թույլատրելի արագությունը ավտոճանապարհներին»: Այլապես, առաջին տարբերակը կարելի է մեկնաբանել այնպես, թե պետք է *պահպանել* ավտոմայրուղիներում սահմանված առավելագույն արագությունը և չի կարելի դրանից ավելի դանդաղ արագությամբ մեքենա վարել: Երկրորդ՝ պետք է պահպանել սահմանված արագությունը մայրուղիներում, իսկ մյուս ավտոճանապարհներին կարելի է և չպահպանել: Երրորդ՝ հարց է առաջանում. իսկ դեկին նստելուց հետո մտածել պետք չէ՞...

Խոսքի ենթատեքստային գործոնը Էսկան նշանակություն ունի դաստիարակչական, քարոզչական գործունեության ընթացքում, երբ, օրինակ, առակների, հեքիաթների, այլաբանական գործիքակազմի միջոցով է մատուցվում հիմնական գաղափարը: Երբեմն էլ ոչ բացահայտ ուղերձն ընդգծելու համար օգտագործվում է *կրկնություն հոնտորական հնարք*⁶ «առակը զի՞նչ ցուցանե՛» հարցի և դրա ընդգծված պատասխանի

Նշեք գովազդային արտահայտությունից բխող առնվազն մեկ ոչ բացահայտ դատողություն:



 ⁶ Այս հնարի, ինչպես նաև խոսքը գեղեցկացնող ու դրա ազդեցությունն ավելացնող այլ միջոցների մասին կխոսենք տվյալ դասընթացի՝ պերճախոսական հնարներին նվիրված մասում:
• ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՉԵՌԱՐԿ

տեսքով:

Հաղորդակցման գործընթացի այնպիսի դրվագներում, ինչպիսիք են գործի նախաքննությունը, դատաքննությունը, մասնավորապես՝ հարցաքննությունը, խոսքի ենթատեքստը ևս էական նշանակություն կարող է ստանալ: Քննիչը, դատախազը կամ փաստաբանը հանցագործության մեջ կասկածվողին «Դու՞ ես կատարել հանցագործությունը» կամ «Արդյոք դու՞ չես հանցագործության հեղինակը» հարցերի փոխարեն կարող են ուղղել «Ու՞մ հետ ես կատարել հանցագործությունը» կամ «Ինձ առավել հետաքրքրում են այն դրդապատճառները, որոնցով առաջնորդվել ես հանցանքը կատարելիս: Գուցե դրանք մեղմացուցիչ հանգամանքներ էլ պարունակեն և թույլ տան որոշակիորեն թեթևացնել մեղքը»՝ քննարկման արժանի ենթատեքստ պարունակող տարբերակները:

Առաջին տարբերակում ենթատեքստն այն է, որ *քննիչը կասկած չունի, որ հանցագործության հեղինակը տվյալ աճն է. դա այլևս քննության առարկա չէ, և քննիչին տվյալ դեպքում ավելի շատ հետաքրքրում է հանցակցի (կամ հանցակիցների) հանգամանքը:*

Երկրորդ դեպքում ևս առկա է նույն ենթատեքստը. *քստ էության արդեն իսկ պարզ է հանցագործության հեղինակը. դա այլևս խնդիր չէ:* Բացի այդ, ենթատեքստը պարունակում է նաև հետևյալ դատողությունները. *քննիչը բարյացակամ է տրամադրված գրուցակցի հանդեպ. նա ցանկանում է վեր հանել լրացուցիչ հանգամանքներ, գուցե և մեղմացուցիչ հանգամանքներ էլ բացահայտվեն հոգուտ մեղադրվողի, դրա համար վերջինս պետք է իր խոստովանական ցուցմունքով օգնի քննիչին:*

Այսպիսի խորամանկ հարցերն ու դատողություն-



Հատուկ ուշադրություն դարձրեք այս ձևակերպումների ենթատեքստերին:



ները կոչվում են *սուգեստիվ* (լատ. suggestio՝ ներշնչել)՝ մտքեր ներշնչող, տրամադրող: Դրանք կարող են լինել նաև սադրիչ, ծուղակներ պարունակող և այլն: Նմանատիպ թույլատրելի և անթույլատրելի հնարքների Դուք դեռ կծանոթանաք այս դասընթացի 8-րդ և 9-րդ դասերի ընթացքում:

Համատեքստի ու ենթատեքստի առանձնահատկությունների դիտարկումը թույլ է տալիս նաև ճիշտ ըմբռնել ու հասկանալ մեզ մատուցված խոսքը, ելույթը: Չրուցակցի դատողությունների տրամաբանական և ֆիզիկական համատեքստի, դիրքորոշման դրդապատճառների, ասվածի ենթատեքստի մեջ խորամուխ լինելու կարողությունն օգնում է ըստ էության ըմբռնել ու մեկնաբանել դրանց իրական բովանդակությունը և նշանակությունը:

Ելույթն ամբողջությամբ և դրա առանցքային դրույթները համատեքստային ու ենթատեքստային հնարավոր մեկնաբանությունների, արժևորումների տեսանկյունից դիտարկելն ու վերլուծելը թույլ է տալիս ոչ միայն բովանդակային առումով հարստացնել խոսքը, այլև խուսափել հնարավոր անցանկալի մեկնաբանություններից ու ըմբռնումներից:

Այսպիսով, այս դասի ընթացքում Դուք ծանոթացաք **սահմանման** ձևերին, իմացաք՝

- **սահմանման կանոնավորությունն** ապահովող օրենքները,
- դրանց կիրառման առանձնահատկությունները,
- ուսումնասիրեցիք խոսքի համատեքստային և ենթատեքստային իրողությունները:

Իմանալով մտքի կանոնավորությունն ապահովող հիմնարար սկզբունքներն ու նորմերը, մտքի համատեքստային և ենթատեքստային գործոնների դերը՝ Դուք առավել ճշգրիտ ու դիպուկ կարող եք լինել Ձեր

խոսքը կառուցելիս, խորաթափանց ու շրջահայաց՝ ստացվող տեղեկությունը վերլուծելիս:

Սակայն, փաստարկման, ելույթի ու հաղորդակցման արդյունավետությունը, հիմնված լինելով տրամաբանական սկզբունքների վրա, չի սպառվում գուտ տրամաբանական և բովանդակային բաղադրիչներով: Էական նշանակություն ունեն նաև արտատրամաբանական գործոններն ու սկզբունքները: Դրանց Դուք կծանոթանաք հաջորդ՝ 4-րդ դասի ընթացքում:

